

**«ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ»  
ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ  
ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՑԱՆԿ**

- Մասնագիտական օտար լեզու
- Տեղեկատվական տեխնոլոգիաներ և էլեկտրոնային կառավարում
- Մարկետինգի կառավարում
- Ֆինանսների հիմունքներ
- Մարդկային ռեսուրսների կառավարում
- Կառավարման արդի հիմնախնդիրները
- Բիզնես, պետություն, հասարակություն փոխգործակցության իրավական կարգավորումը
- Բիզնեսի ռազմավարություն
- Կորպորատիվ ֆինանսներ
- Գործարարական իրավունք
- Հետազոտության մեթոդաբանություն և գործարար փաստաթղթաշրջանառություն
- Գործարար հաղորդակցություն և բանակցություններ
- Բիզնեսի վերլուծություն
- Մարկետինգային հաղորդակցություն և գովազդ
- Հաշվապահական հաշվառում
- Էլեկտրոնային բիզնես
- Նախագծերի կառավարում
- Առաջնորդություն
- Կառավարչական որոշումների ընդունում
- Ներդրումների վերլուծություն
- Կառավարչական հաշվառում
- Լոգիստիկ համակարգերի կառավարում
- Տեղեկատվական կառավարում

**Ուսման տևողությունը՝ երկու տարի:**

**ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՈՎ**

Ստուգվում են դիմորդի ընդհանուր զարգացվածությունը, բանավոր խոսքի մշակույթը, օտար լեզվի իմացությունը և բազմազգիտակությունը (Էրուդիցիա):



**Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով՝**  
**(091) 67-89-06 Գայանե Նիկողոսյան (Կրթական ծրագրի պատասխանատու փաստաթղթեր ընդունող հանձնաժողովի անդամ)**  
**(091) 496 269 Աննա Ղուշյան (Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղար)**



**«ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (MBA)» ՀԵՌԱՎԱՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ**



## ԻՆՉՈ՞Ւ ԸՆՏՐԵԼ ՀԵՌԱՎԱՐ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ

✓ Առցանց կրթությունը ժամանակի հրամայականն է: Հեռավար կրթության համակարգը հիմնված է միջազգային փորձի վրա: Ոչ միայն կրթությունը, այլև շուկան օրեցօր դառնում է առցանց, քանի որ մարդիկ գերզբաղված են, ունեն ժամանակի կառավարման խնդիր, միաժամանակ ցանկանում են ստանալ որակյալ կրթություն:

✓ Հեռավար ուսուցումը կրթության ոլորտում նորարարություն է, այն ապահովում է բարձրագույն կրթության մատչելիությունն ու հասանելիությունը:

✓ Հեռավար ուսուցումը համակարգված ուսուցման ձև է, երբ ուսուցման ողջ գործընթացը հիմնականում իրականացվում է տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով:

✓ Հեռավար ուսուցումը հնարավորություն է ընձեռում ստանալու մագիստրոսական կրթություն՝ չհեռանալով բնակության վայրից և չկտրվելով աշխատանքից, ինչպես նաև ապահովում է ֆիզիկական սահմանափակ կարողություններով անձանց, տարբեր սոցիալական խմբերի կրթություն ստանալու հնարավորությունը:



## ԻՆՉՈ՞Ւ ԸՆՏՐԵԼ ՀԵՆՑ ԱՅՍ ԿՐԹԱՎԱՆ ԾՐԱԳԻՐԸ

✓ «Գործարար վարչարարություն» կրթական ծրագիրն իրականացվում է հեռավար ուսուցման ձևով:

✓ Եթե ցանկանում եք հիմնել կամ զարգացնել սեփական բիզնեսը, սակայն դասերին հաճախելու ժամանակ չունեք, ապա այս կրթական ծրագիրը հենց ձեզ համար է:

✓ «Գործարար վարչարարություն» մագիստրոսական կրթական ծրագիրը կադրեր է պատրաստում բիզնեսի կառավարման ոլորտի համար ողջ աշխարհում:

✓ Դասավանդումն իրականացնում է հեռավար կրթության ոլորտում վերապատրաստված պրոֆեսորադասախոսական կազմ՝ համալրված հանրապետության լավագույն մասնագետներով:

## ԻՆՉՊԵ՞Ս Է ԿԱԶՄԱԿԵՐՊՊՎՈՒՄ ՀԵՌԱՎԱՐ ՌԻՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

✓ Կրթության այս տեսակը դասախոսի և ուսանողի միջև լսարանային շփում չի պահանջում:

✓ Հեռավար ուսուցման ողջ գործընթացը կազմակերպվում է հեռավար ուսուցման կառավարման հարթակի միջոցով՝ առցանց հանդիպումների (վեբինարների), առցանց առաջադրանքների ու հանձնարարությունների կատարման, իրավիճակային խնդիրների, ինքնաստուգման թեստերի լուծման ձևաչափով:

✓ Հարթակում գրանցված ուսանողներն օգտվում են հարթակում բեռնաձեռն էլեկտրոնային նյութերի բազայից, ինչը հնարավորություն է տալիս ունենալու դասընթացի յուրացման

համար անհրաժեշտ աղբյուրներ և նորմատիվ ակտեր:



## ԿԱ՞Ն ԱՐԴՅՈՔ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՁՆԵՐ

✓ Հայերենի իմացությունը պարտադիր է, քանի որ ամբողջ դասընթացը կառուցված է հայերենով:

✓ Տարվա ընթացքում առնվազն երկու անգամ կիսամյակային եզրափակիչ քննություններին մասնակցություն (դեմառդեմ):

✓ Մասնակցություն պարտադիր մասնագիտական պրակտիկաներին:

✓ Ամփոփիչ քննությանը բարձր գնահատական ստանալու համար անհրաժեշտ է հաղթահարել միջանկյալ քննության սահմանված շեմը (40 %), ինչպես նաև առցանց հանդիպումների մասնակցության և առցանց (գնահատվող) առաջադրանքների ու հանձնարարությունների սահմանված շեմը (40 %):